Սիբիրախտ (անտրաքս)

Ի՞նչ է սիբիրախտը:

Սիբիրախտն օգտագործվել է ահաբեկչական հարձակումների ժամանակ: Այն շատ լուրջ հիվանդություն է: Այն վարակիչ չէ: Սիբիրախտով հիվանդ որեւէ անհատից Դուք չեք կարող վարակվել:

Ի՞նչպես են վարակվում սիբիրախտով:

Սիբիրախտով հնարավոր է վարակվել 3 ձեւով.

- Մաշկի կտրվածքի կամ քերծվածքի միջոցով:
- Սիբիրախտ պարունակող օդը շնչելով:
- Սիբիրախտով թունավորված կերակուր ուտելով:

Ի՞նչ աստիճանի վտանգ է ներկայացնում սիբիրախտը:

Մարդկանց մեծամասնությունը (99%), որոնք ընդունում են մաշկային սիբիրախտի վաղաժամ բուժումներ, ողջ են մնում: Առանց բուժման 20%-ը կմահանա:

Սիբիրախտ ներշնչելն ավելի վտանգավոր է: Սիբիրախտ ներշնչող անհատների կեսը կմահանա:

Բացառիկ դեպքերում, սիբիրախտը կարող է գտնվել մսի մեջ՝ բնականորեն: Կա մեռնելու 25%-50% հնարավորություն՝ այս թունավորված միսն ուտելու դեպքում: Հնարավոր է, որ միտումնավոր կերպով սիբիրախտ ավելացնեն ուտելիքի մեջ մարդկանց թունավորելու նպատակով:

Որո՞նք են ախտանշանները:

Մաշկային սիբիրախտն առաջացնում է փոքր, քոր եկող այտուց (սովորաբար դեմքի, ձեռքերի կամ բազուկների վրա), որը վերածվում է բշտիկի: Բշտիկը դառնում է բաց վերք, մեջտեղը՝ սեւ:



Եթե **սիբիրախտ ներշնչեք**, սկզբում կարող է թվալ, թե մրսել եք կամ չոր հարբուխ ունեք: Կարող եք ունենալ կոկորդի ցավ, թեթեւ ջերմություն եւ մկանների ցավ, որոնց կհաջորդեն հազ, շնչարգելություն, կրծքավանդակի շրջանում նեղություն եւ հոգնածություն:

Թունավորված մսի մեջ գտնվող սիբիրախտը պատճառում է սրտխառնոց, քաղցի զգացողության կորուստ, արյունախառն լուծ, ջերմություն եւ ստամոքսային ուժեղ ցավեր:

Ե՞րբ են ախտանշաններն սկսում ի հայտ գալ:

Սիբիրախտի բոլոր 3 տիպի ախտանշաններն սկսում են ի հայտ գալ վարակվելուց հետո 7 օրվա ընթացքում:

Եթե սիբիրախտ ներշնչեք, ախտանշանները կարող են սկսվել մեկ շաբաթվա ընթացքում, կամ կարող են մնալ անհայտ մեկ ամսից ավելի:

Ինչի՞ կարող է նմանվել սիբիրախտի հարձակումը:

Անցյալում, սիբիրախտը մեծամասնաբար երեւան է եկել ճերմակ փոշու ձեւով: Եթե Դուք հայտնաբերեք անծանոթ ճերմակ փոշի Ձեր փոստային ծրարների մեջ կամ այլուր, ՝հետեւեցեք այս քայլերին.

- Ձեռք չտաք կամ չհոտոտեք փոշին:
- Զգուշացրեք ուրիշներին, որպեսզի չմոտենան փոշուն:
- Լվացեք Ձեր ձեռքերը:
- Հեռաձայնեցեք Ձեր շրջանի հրշեջ բաժնին կամ ոստիկանությանը:

Ի՞նչ անել, եթե կարծում եմ որ եղել եմ սիբիրախտի ազդեցության գոտում:

Անհապաղ հեռաձայնեցեք Ձեր բժշկին կամ հիվանդանոց: Նրանք Ձեզ կասեն, թե ինչ պետք է անել:

Արդյո՞ք պատվաստանյութ գոյություն ունի:

Այո, սակայն սահմանափակ քանակությամբ, որը բավարար է միայն սիբիրախտով վարակված անձանց կամ վտանգավոր գոտիներում աշխատողների համար, ինչպիսիք են օրինակ ռազմական կամ առողջապահության ոլորտները:

Հավելյալ տեղեկությունների համար.

Հեռաձայնեցեք CDC-ին անգլերենով օգնություն ստանալու համար.
800-CDC-INFO (800-232-4636)
888-232-6348 (TTY)

Կամ այցելեցեք ինտերնետ՝
www.cdc.gov/anthrax
www.dhs.ca.gov/epo հասցեներով: